<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաշվի առնելով արդի պահանջներին համապատասխան ուսուցում կազմակերպելու անհրաժեշտությունը, որպես կամավոր լիազորության իրականացում, համաձայնվել էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ ձեռք բերելու և Ջերմուկի ավագ դպրոցին անհատույց օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը: Այդ նպատակով համայնքի բյուջեի ֆոնդային մասով հատկացնել 1085544 /մեկ միլիոն ութսունհինգ հազար հինգ հարյուր քառասունչորս / ՀՀ դրամ գումար (տնտեսագիտական հոդված 5122):

2. Համաձայնվել << Ջերմուկի երիտասարդական կենտրոն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ կահույք և տեխնիկական միջոցներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեի ֆոնդային մասով 135000 / մեկ հարյուր երեսունհինգ հազար / ՀՀ դրամ գումար (տնտեսագիտական հոդված 5122) հատկացնելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Համաձայնվել համայնքի հանդիսությունների սրահի համար անհրաժեշտ կահույք ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեի ֆոնդային մասով 4500000 / չորս միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ գումար (տնտեսագիտական հոդված 5122) հատկացնելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կարլենի | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2013թ. N 32-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկի համայնքի 2013 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը՝ հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների ( ձև 22 և ձև 22ա ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Հավելված 1
Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հուլիսի 31-ի N 32-Ա որոշման

Ձև N 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01.07.2013 թ.)

Մարզ: Վայոց Ձոր (անվանում) — 10 (Կոդ)

Համայնք: Ջերմուկ (անվանում) — 827 (Կոդ)

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը (2+3+4+8+12) | Սեփականության սուբյեկտ: ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: տրված օգտագործման | համայնքային: տրված վարձակալության | համայնքային: վարձակալության և օգտագործման չտրամադրված | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: տրված օգտագործման | պետական: տրված վարձակալության | պետական: վարձակալության և օգտագործման չտրամադրված | Օտար պետության, իրավ. անձի և ՀՀ-ի քաղ-ի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական նշանակության | վարելահող | | 673.16 | 494.95 | | 178.21 | | 18.50 | 159.71 | | | | | |
| 1.2 | | բազմ տնկարկներ, ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում՝ պտղատու այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 637.01 | 413.42 | | 181.89 | | | 181.89 | 41.70 | | | 41.70 | |
| 1.4 | | արոտ | | 2311.79 | 1.20 | | 1633.18 | | 2.30 | 1630.88 | 677.41 | | 187.00 | 490.41 | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 1019.34 | 2.50 | | 972.25 | | 0.64 | 971.61 | 44.59 | | | 44.59 | |
| 1 | | Ընդամենը | | 4641.30 | 912.07 | | 2965.53 | | 21.44 | 2944.09 | 763.70 | | 187.00 | 576.70 | |
| 2.1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 110.99 | 70.48 | | 40.51 | | 0.64 | 39.87 | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ տնամերձ հողեր | | 60.82 | 60.82 | | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառ-ն) | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական կառուցապ. | | 83.81 | 69.06 | 6.20 | 3.84 | | 3.78 | 0.06 | 4.71 | 0.29 | | 4.42 | |
| 2.3 | | խառը կառուցապատման | | 0.47 | 0.21 | | 0.26 | | | 0.26 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր օգտագործման | | 44.56 | | | 44.56 | | | 44.56 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 85.57 | 0.33 | | 85.24 | | 0.47 | 84.77 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 325.40 | 140.08 | 6.20 | 174.41 | | 4.89 | 169.52 | 4.71 | 0.29 | | 4.42 | |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակության | արդյունաբերության | | 22.66 | 1.09 | | 19.51 | | 0.98 | 18.53 | 2.06 | | | 2.06 | |
| 3.2 | | գյուղատնտեսական, արտադր. | | 10.37 | | | 10.37 | | | 10.37 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | 2.53 | | | 2.53 | | | 2.53 | | | | | |
| 3.4 | | ընդերքը օգտագործման | | 13.40 | | | | | | | 13.40 | | 2.90 | 10.50 | |
| 3 | | Ընդամենը | | 48.96 | 1.09 | | 32.41 | | 0.98 | 31.43 | 15.46 | | 2.90 | 12.56 | |
| 4.1 | 4.Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների | Էներգետիկայի | | 9.03 | | 0.53 | 1.83 | | 1.58 | 0.25 | 6.67 | 4.81 | 1.23 | 0.63 | |
| 4.2 | | կապի | | 0.38 | | | 0.38 | | | 0.38 | | | | | |
| 4.3 | | տրանսպորտի | | 54.12 | | | 2.53 | | | 2.53 | 51.59 | | | 51.59 | |
| 4.4 | | կոմունալ ենթակառուցվածքը | | 3.45 | | | 3.45 | 2.66 | | 0.79 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 66.98 | | 0.53 | 8.19 | 2.66 | 1.58 | 3.95 | 58.26 | 4.81 | 1.23 | 52.22 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | 4514.54 | | | | | | | 4514.54 | 4514.54 | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոցներ | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | 4514.54 | | | | | | | 4514.54 | 4514.54 | | | |
| 5.1.3 | | ազգային պարկեր | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | 24.75 | | 2.32 | 22.43 | | | 22.43 | | | | | |
| 5.3 | | հանգստի | | 10.25 | 4.55 | | 5.70 | | | 5.70 | | | | | |
| 5.4 | | պատմական և մշակութային | | 33.25 | | | 3.81 | | | 3.81 | 29.44 | | | 29.44 | |
| 5 | | Ընդամենը | | 4582.79 | 4.55 | 2.32 | 31.94 | | | 31.94 | 4543.98 | 4514.54 | | 29.44 | |
| 6 | 6.Հատուկ նշանակության | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 3588.46 | | | | | | | 3588.46 | | | 3588.46 | |
| 7.2 | | թփուտ | | 155.59 | | | | | | | 155.59 | | | 155.59 | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | 3.63 | | | | | | | 3.63 | | | 3.63 | |
| 7.5 | | արոտ | | 8.05 | | | | | | | 8.05 | | | 8.05 | |
| 7.6 | | այլ հողեր | | 130.82 | | | | | | | 130.82 | | | 130.82 | |
| 7 | | Ընդամենը | | 3886.55 | | | | | | | 3886.55 | | | 3886.55 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 52.59 | | | | | | | 52.59 | | | 52.59 | |
| 8.2 | | ջրամբարներ | | 120.74 | | | | | | | 120.74 | | | 120.74 | |
| 8.3 | | լճեր | | 3.35 | | | 3.35 | | | 3.35 | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | 8.49 | | | 0.28 | | | 0.28 | 8.21 | | | 8.21 | |
| 8.5 | | հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ. | | | | | | | | | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 185.17 | | | 3.63 | | | 3.63 | 181.54 | | | 181.54 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտագործելի հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9) | | | | 13737.15 | 1057.79 | 9.05 | 3216.11 | 2.66 | 28.89 | 3184.56 | 9454.20 | 4519.64 | 191.13 | 4743.43 | |

Հավելված 2
Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հուլիսի 31-ի N 32-Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև **22ա**

## Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի եւ սեփականության սուբյեկտների )

Մարզ` Վայոց Ձոր (անվանումը) 10 (կոդ)

Համայնք` Ջերմուկ (անվանումը) 827 (կոդ)

| NN | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն, հողատեսք | կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր (2+3+4+5+6) | Սեփականության սուբյեկտ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ պետական սեփականություն | ՀՀ համայնքային սեփականություն | Քաղաքացիների սեփականություն | Իրավաբանական անձանց | Օտարերկրյա պետությունների սեփականություն |
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 40.7 | 40.7 | | | | |
| 1.2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում` պտղատու այգի | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 101.5 | 101.5 | | | | |
| 1.4 | | արոտ | | | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 142.2 | 142.2 | | | | |
| 2.1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 18.0 | 18.0 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 18.0 | 18.0 | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2.2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2.3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 18.0 | 18.0 | | | | |
| 3 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+9) | | | | 160.2 | 160.2 | | | | |

Համայնքի ղեկավար` ____________ /ստորագրություն, կնիք/

կատարող` ____________ /ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2013թ. N 33-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 Թ. ԱՊՐԻԼԻ 30-Ի N 20-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի վերջին պարբերության հիման վրա և Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109 հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերության համապատասխան ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացմանն օժանդակելու և ստացված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 164-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ կետի համաձայն հաստատել Ջերմուկի համայնքի ղեկավարին կից խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը.

հանձնաժողովի նախագահ՝ Թաղևոսյան Գ. - քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

հանձնաժողովի անդամներ՝ Ներսիսյան Ա.- քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի առաջատար մասնագետ

Բաղդասարյան Ա.- Ջերմուկի հիմնական դպրոցի ուսուցչուհի

Աստրյան Ս.- քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Սարգսյան Զ. - քաղաքային գրադարանի տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2013թ. N 34-Ա

## ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

<<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում ընդգրկել ավագանու երեք անդամներ՝ անհատական հետևյալ կազմով. Պողոսյան Արթուր, Համբարձումյան Մխիթար, Հովհաննիսյան Գևորգ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Որոշումն ընդունված է՝ կողմ- ……9…… դեմ-……0…… ձեռնպահ- ……0……

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2013թ. N 35-Ն

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ և 19.1-րդ կետերի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ղեկավարվելով <<Աղբահանության ու սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 15-րդ և 19-րդ հոդվածների դրույթներով՝ սահմանել Ջերմուկի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, ինչպես նաև աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արազգեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |
| Պողոսյան Արթուր Վահրամի | | | |
| Ստեփանյան Վիգեն Արշակի | | | |

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2013թ. հուլիսի 31-ի թիվ 35-Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Ջերմուկի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Ջերմուկի համայնքի ավագանու որոշումը:

3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ե» կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

### II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:

5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը վարվում է համապատասխան համակարգչային ծրագրով:

6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:

### III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Ջերմուկի համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

1) հիվանդանոցներ՝ 1 մահճակալը - 96 դրամ (հաշվարկվել է՝ 1 մահճակալ-աղբագոյացման նորման ամսական մոտավորապես 0.06խմ ),

2) համաբուժարաններ՝ 1 հաճախորդը - 8 դրամ (հաշվարկվել է՝ 1 հաճախորդ-աղբագոյացման նորման ամսական 0.005խմ ),

3) հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինություններ՝ 1 տեղը- 98 դրամ (հաշվարկվել է՝ 1 տեղ - աղբագոյացման նորման ամսական 0.061խմ),

4) ուսումնական հաստատություններ՝ 1 սովորողը- 13դրամ (հաշվարկվել է՝ 1 սովորող- աղբագոյացման նորման ամսական- 0.008խմ),

5) համայնքային նախադպր. հաստատություններ և մշակույթի օջախներ – 0 դրամ,

6) հասարակական սննդի օբյեկտներ՝ սրահի 1քմ- 97 դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.061խմ),

7) մթերային խանութներ, կրպակներ, տաղավարներ, սպասարկման, տեխսպասարկման օբյեկտներ, ծաղկի սրահներ, վարսավիրանոցներ, ավտոլվացման կետեր 1քմ- 40 դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.025խմ),

8) արդյունաբերական ապրանքների խանութներ՝ 1քմ- 29դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական- 0.018խմ),

9) շուկաներ՝ 1քմ- 121 դրամ (հաշվարկվել է՝ 1քմ- աղբագոյացման նորման ամսական 0.076խմ ),

10) հիմնարկներ, գրասենյակներ, բանկեր՝ 1քմ- 27 դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.017խմ ),

11) բենզալցակայաններ, գազալցակայաններ՝ 1քմ- 18դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.011խմ ),

12) դեղատներ՝ 1քմ- 18դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.011խմ ),

13) արտադրական, արդյունաբերական ձեռնարկություններ՝ 1քմ- 8 դրամ (հաշվարկվել է՝ 1 քմ- աղբագոյացման նորման ամսական - 0.005խմ),

Հաշվարկների համար հիմք է հանդիսացել «Քաղաքների և այլ բնակավայրերի սանիտարական մաքրման հարցերի մասին» 1973-1978թթ ուղեցույցներում բերված միջինացված նորմատիվները:

14) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձման կազմակերպումը իրականացվում են Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների կողմից (այսուհետ՝ համակարգող): Աղբահանության վճար վճարողները աղբահանության վճարները ինքնուրույն բանկային համակարգի միջոցով փոխանցում են համայնքի բյուջեի համապատասխան հաշվին:

մշտական ապրող տարեցների և հենաշարժական սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց աղբահանության վճարները կարող են գանձվել կանխիկ՝ ըստ բնակության հասցեի, վճարողին հանձնելով կանխիկ գանձման համար համայնքի ղեկավարի կողմից սահմանված նմուշի անդորրագրի կտրոն:

10. Համակարգողը պարբերաբար, ոչ ուշ, քան 10 օրը մեկ, գանձապետական բաժանմունքից ստացված աղբահանության վճար վճարողների կողմից ինքնուրույն կատարված մուտքերը, ինչպես նաև կանխիկ կատարված գանձումները տվյալների շտեմարանում գրանցելուց հետո, կազմում է տվյալ ամսվա ընթացքում վճարված աղբահանության վճարի մասին հաշվետվություն և ներկայացնում քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետին:

## V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

11. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

12. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

## VI. Այլ դրույթներ

13. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են համայնքի ղեկավարի կողմից:

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2013թ. N 36-Ն

## ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ և 19.1-րդ կետերի հիման վրա, ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների դրույթներով՝ ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Հաստատել Ջերմուկի համայնքում աղբահանության իրականացման կարգը համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել Ջերմուկի համայնքի սանիտարական մաքրման սխեման համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Այվազյան Առուշան Մկրտիչի | | | |
| Արսենյան Արմինե Արագեղեցիկի | | | |
| Բագրատյան Արտակ Կարլենի | | | |
| Խանամիրյան Բագրատ Սենիկի | | | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | | | |
| Հովակիմյան Ազատ Հայրիկի | | | |
| Հովակիմյան Հարություն Հայրիկի | | | |
| Հովհաննիսյան Գևորգ Վարդանի | | | |
| Մկրտչյան Մայիս Վարանցովի | | | |

Հավելված 1
Ջերմուկի համայնքի ավագանու
2013 թ. հուլիսի 31-ի թիվ 36-Ն որոշման

# ԿԱՐԳ

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են Ջերմուկի համայնքի վաչական տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական անձանց, համայնքի մշտական և ժամանակավոր բնակիչների, աղբահանության ծառայություն ստացող այլ անձանց վրա:

3. Աղբահանությունը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Աղբի հավաքման, հեռացման, փոխադրման, պահման, աղբավայրերի շահագործման հսկողությունը իրականացնում է համայնքի ղեկավարը:

4. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ անհրաժեշտ է.

ա) նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական /վտանգավոր/ ներգործությունը,

բ) ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ,

գ) աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը:

## II Աղբի հավաքման , պահման , աղբամանների տեղադրման վայրերը

5. Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և քաղաքապետարանի տրամադրած տարրողություններում՝ աղբամաններում (աղբարկղերում), հնարավորիս ապահովելով սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջները: :

6. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15 մ և ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա: Պուրակներում, զբոսայգիներում աղբամանները տեղադրվում են մարդկանց զանգվածային կուտակման վայրերից ոչ պակաս, քան 50 մ հեռավորության վրա: Հանգստի գոտիներում աղբամանները տեղադրվում են 3500-4000 $մ^2$ մակերեսին 1 աղբաման հաշվարկով:

7. Աղբամանները տեղադրվում են բնակելի և հասարակական շենքերի բակային կամ միջբակային տարածքներում՝ փոխադրամիջոցի մոտեցման համար հարմար դիրքով, ջրանթափանց, հարթ, բարեկարգ մակերեսով հարթակների վրա: Աղբամանները չեն տեղադրում փողոցների մայթերի և սիզամարգերի վրա:

8. Աղբամանները աղբով լցվում են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:

9. Սպառման թափոնները փոխադրվում են աղբատար փոխադրամիջոցներով, որոնց փակ թափքերով կառուցվածքը բացառում է շրջակա միջավայրի աղտոտումը:

10. Աղբատար փոխադրամիջոցի կառուցվածքը ապահովում է աղբի խտացումը, ունենում է աղբաջրերը հավաքող համակարգ, կողքից կամ հետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք և /կամ/ կոնտեյներները լվանալու համակարգ:

11. Սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը) իրականացվում են համաձայն աղբահանության սխեմաների:

12. Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնողների կողմից մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը: Աղբահանության ժամանակ տեղափոխում են նաև աղբակույտերը և տերևակույտերը, դրանց այրումը արգելվում է:

13. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանիչ լուծույթներով ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնողների կողմից:

14. Աղբահավաք կոնտեյներները լվացվում և ախտահանվում են ամիսը 1 անգամ՝ աղբահանությունը իրականացնողների կողմից, ախտահանման համար օգտագործվում է քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%), նատրիում մետասիլիկատի (1-3%) կամ Հայաստանի Հանրապետության <<Դեղերի մասին>> օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին« N 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:

15. Աղբամաններ պարտադիր տեղադրվում են ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, ավտոկայանատեղիներում, բացօդյա առևտրի տեղերում, հանգստի գոտիներում և այլն:

16. Կրպակներում առևտուր իրականացնող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում, որտեղ չեն պահեստավորում ապրանքներ, տարաներ կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

17. Բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի (այդ թվում և՝ բակային կողմից) հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում դրանք օգտագործողների կողմից, այդ տեղերում չեն կուտակվում ապրանքների արկղեր կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

18. Սպառման թափոնների թաղումը (տեղադրումը) և վնասազերծումը իրականացվում է հատուկ հատկացված տեղերում՝ սպառման թափոնների աղբավայրերում:

19. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների կողմից իրենց միջոցներով ձեռք բերած աղբամաններում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում: Ընդ որում, համայնքը աղբամանները կամ կոնտեյներները աղբահանության համար վճարողներին, վերջիններիս պահանջով, կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:

Աղբը տեղափոխվում է փաստացի գործող աղբավայր:

20. Փաստացի գործող աղբավայր՝ աղբավայր, որի շահագործման համար չկա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվություն, սակայն որպես աղբավայր փաստացի շահագործվում է դեռևս 1970-ական թվականներից, (հողամասի ծածկագիրը, ՀՀ կառավարության 1054 որոշմամբ նպատակային նշանակությունը՝ աղբավայր) և վերահսկվում է տեղական ինքնակառավարման մարմինի կողմից:

21. Չի թույլատրվում՝

ա) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում,

բ ) սպառման թափոնների այրումը ,

գ) աղբի համար նախատեսված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կասւստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենաների յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայթուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր ու թափոններ,

դ) աղբի համար նախատեսած վայրում տեղադրել սատկած կենդանու մարմին:

22. Սատկած կենդանու մարմինը պետք է արագորեն հեռացվի քաղաքի առողջապահության պատասխանատուի ցուցումով: Եթե սատկած կենդանու տերը հայտնի է, ապա հեռացումն իրականացվում է նրա կողմից, իսկ եթե տերը հայտնի չէ, ապա՝ քաղաքապետարանի կողմից:

23. Աղբահանությանն իրականացվում է հետևյալ նվազագույն ժամանակացույցով.

| h/h | Մաքրվող փողոցների, հրապարակների, հուշարձանների և զբոսայգիների անվանումը | Մաքրվող փողոցների, երկարություն ները մ | Մաքրվող տարածքների մակերեսները քմ | Շաբաթվա օրեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I | II | III | IV | V | VI | VII |
| | Աջափնյակ | | | | | | | | | |
| | Շահումյան փողոց | | 18090 | | | | | | | |
| | Մյասնիկյան փողոց | | 7850 | | | | | | | |
| | Վարդանյան փողոց | | 1120 | | | | | | | |
| | Գործարանային փողոց | | 1260 | | | | | | | |
| | Ջիվանու փողոց | | 3600 | | | | | | | |
| | Ըմպելասրահի տարածք | | 3500 | | | | | | | |
| | Ֆիդայիների ծառուղի | | 9000 | | | | | | | |
| | Զ. Վարդանյանի անվան պուրակ | | 2210 | | | | | | | |
| | Քաղաքային այգի | | 26400 | | | | | | | |
| | Տարեցների այգի | | 1270 | | | | | | | |
| | Մեծ կամրջի տարածք | | 5400 | | | | | | | |
| | Մելիք-Ադամյան փողոց | | 2600 | | | | | | | |
| | Չարենցի փողոց | | 1420 | | | | | | | |
| | Պատկերասրահից ձոր իջնող և դեպի մեծ կամուրջ բարձրացող խճ. | | 12000 | | | | | | | |
| | Երևանյան խճուղի | | 25000 | | | | | | | |
| | Ձախափնյակ | | | | | | | | | |
| | Մաշտոցի փողոց | | 28800 | | | | | | | |
| | 2-րդ փողոց | | 3600 | | | | | | | |
| | 4-րդ փողոց | | 3600 | | | | | | | |
| | Ազատամարտիկների փողոց | | 2700 | | | | | | | |

24. Աղբարկղները տեղադրվում են հետևյալ վայրերում, հետևյալ քանակով ու չափսերով.

| Աղբարկղեր տեղադրելու վայրերը | Աղբարկղերի քանակը և տեսակը | Աղբարկղերի չափերը |
|---|---|---|
| Կեչուտ թաղամաս | 16 մետաղական | 1 խմ |
| Բարդիների պուրակ | 1 մետաղական | 1 խմ |
| ,,Հայաստանի ցանցեր,,ՓԲԸ | 2 մետաղական | 1 խմ |
| Ավտոտեխսպասարկման կետեր | 2 մետաղական | 1 խմ |
| Սառնաղբյուր | 1 մետաղական | 1 խմ |
| Ձախափնյակ թաղամաս | 61 պլաստամասե | 0.3 խմ |
| Ձախափնյակ թաղամաս | 1 երկաթյա | 1 խմ |
| Ջերմուկի աջափնյակ թաղամաս | 38 պլաստամասե | 0.3 խմ |
| Ջերմուկի աջափնյակ թաղամաս | 12 երկաթյա | 1 խմ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Ջերմուկի համայնքի ավագանու
2013թ. հուլիսի 31-ի թիվ 36-Ն որոշման

# ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ

| Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը | Սանիտարական մաքրման ենթակա տարածքները | Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները | | | Աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները | Անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները | Սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ծառայության անվանումը | Չափ-ման միավ. | Ծավալը | | | |
| 1.Կենցաղային աղբ - 62,926 խմ<br>2.Շինարարա-կան աղբ – 0 խմ<br>3.Ավելվածք-0խմ<br>4. Խոշոր եզրաչափերի աղբ - 0 խմ<br>5.Ոչ կենցաղային աղբ - 796,2 խմ | <u>Աջափնյակ</u><br>Շահումյան փողոց - 18090քմ<br>Մյասնիկյան փողոց - 7850քմ<br>Վարդանյան փողոց -1120քմ<br>Գործարանային փողոց -1260քմ<br>Ջիվանու փողոց -3600քմ<br>Ըմպելասրահի տարածք -3500քմ<br>Ֆիդայիների ծառուղի-9000քմ<br>Զ. Վարդանյանի անվան պուրակ-2210քմ<br>Քաղաքային այգի -26400քմ<br>Տարեցների այգի -1270քմ<br>Մեծ կամրջի տարածք -5400քմ<br>Մելիք-Աղամյան փողոց - 2600 քմ<br>Չարենցի փողոց -1420քմ<br>Պատկերասրահից ձոր իջնող և դեպի մեծ կամուրջ բարձրացող խճ. -12000քմ<br>Երնանյան խճուղի - 25000քմ<br><u>Ձախափնյակ</u><br>Մաշտոցի փողոց - 28800քմ<br>2-րդ փողոց -3600քմ<br>4-րդ փողոց -3600քմ<br>Ազատամարտիկների փողոց -2700քմ | Կենցաղային աղբի տեղափոխում | խմ | 62,926 | Աղբը հավաքվում է մետաղական աղբարկղերի մեջ, որոնք ունեն բացովի կափարիչներ, տեղադրվում են բնակելի տներից և բնակելի շենքերից ոչ պակաս 15մ և ոչ ավել քան 100մ հեռու: Աղբահանությունն իրականացվում է օրական մեկ անգամ, առավոտյան մինչև ժամը 9.00-ը: Բանուկ փողոցների ու մայթերի սանիտարական մաքրումն իրականացվում է առավոտյան մինչև ժամը 9.00-ը: Աղբավայրը հարթեցվում է, ծածկվում հողի շերտով՝ տարեկան մեկ անգամ:<br>Աղբի տեսակավորում չի իրականացվում: | Աղբատար փոխադրամիջոցը ապահովում է աղբի խտացումը, ունի աղբաչրերը հավաքող համակարգ, կողքից կամ ետնամասում կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք: | Այլ տարածքներում սանիտարական մաքրման ենթակա հուշարձաններ չկան: |
| | | Ոչ կենցաղային աղբի տեղափոխում | խմ | 796,2 | | | |
| | | Խոշոր եզրաչափերի աղբի տեղափոխում | խմ | | | | |
| | | Շինարարական աղբի տեղափոխում | խմ | | | | |
| | | Սանիտարական մաքրման տարածքներ | քմ | 159420 | | | |
| | | Մաքրվող տարածքներ մեքենայական լվացման աշխատանքներ ջրցան մեքենայով | կմ | 6 | | | |
| | | Ավելվածքի տեղափոխում | խմ | | | | |
| | | Ձյան մաքրման աշխատանքներ մեքենայով | քմ | | | | |
| | | Ձյան մաքրման աշխատանքներ ձեռքով | քմ | 8500 | | | |
| | | Աղի և ավազի տարածում | քմ | 124000 | | | |
| | | Անձրևաջրատար առուների մաքրում 20 անգամ | քմ | | | | |
| | | Անձրևաջրատար առուների մաքրումից առաջացած աղբի, տիղմի տեղափոխում | խմ | | | | |
| | | Աղբավայրի խնամք, աղբի հարթեցում, հողով ծածկում | խմ | | | | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ